

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ՆԵՊՈՒԷՐՆ ԲՕՆԵՊՈՐՏԷ¹⁾

Պարոյոս Լուդովիկոս Նապոլէօն, եղբօր որդի առաջնն-
րորդ Նապոլէօնին, ծնեցաւ 1808 թիւ, Ապրիլի 20-ին Ցուի-
լլըրեան պալատում: Նորա հայրը Լուդովիկոս Բօնապարտէն,
այն ժամանակվայ Հօլլանդայի Թագաւոր էր, որի կինը, այսինքն
Նապոլէօն Գ-ի մայրը Հորաենզիա-Փաննին Մարկիզ դը Բօզար-
նէի և Ժօզիֆինէի դուստրն էր: Բայց այս թվականներում
Ժօզեֆինէն արդէն կայսրուհի էր, որովհետեւ Նապոլէօն առա-
ջինը ամուսնացաւ նորա հետ: Աւելի պարզ հասկանալու համար
այսպէս պէտք է ասել. Ժօզեֆինէն Նապոլէօն առաջինի կինն
էր. իսկ Ժօզեֆինէի Հորաենզիա-Փաննի անունով դուստրը-
որ ծնած էր Մարկիզ դը Բօզարնէի հետ ամուսնութիւնից,
Լուդովիկոս Բօնապարտէի, այսինքն Նապոլէօն առաջներորդի
եղբօր կինն էր:

Թնդանութները իմաց տուին Քրանսիոյ մայրաքաղաքին-
կայսեր եղբօր որդու ծնունդը և ուրախական տօնախմբութիւնը
կաարավեցան այս պատճառով, Քրանսիոյ կայսերութեան ամեն
տեղում. այն ժամանակ Քրանսիական կայսերութիւնը տարած-
վում էր Բալտիկեան ծովից մինչև Պիրիզեայքը և Դանուբից
մինչև Միջերկրական ծովը:

Նորածին իշխանի առաջին տարիները անցաւ իր հօրեղ-
բօր շատ հօր և ճոխ ժամանակը. բայց շուտով սորանից յետոյ,
բաղդը սկսեց հալածել նորան: Դիշտ այն օրը, երբ Լուդովի-
կոս Նապոլէօնը վեց տարեկան եղաւ, այսինքն 1814 թ. Ապ-
րիլի 20-ին կայսրը իր հրաժարական ողջոյնը տուեց իր հաւա-
տարիւմ զինուորակիցներին, Փօնտենէրլօի ապարանքում և հե-

1) Մ. Նալբանդեանցի այս անտիպ ձեռագիրը մենք ստա-
ցանք մեր աշխատակից պ. Նր. Շահապլիից, որ հանգուցեալ հրա-
պարակաթօսի այլ ձեռագիրների հետ ստացել էր նորա բրոջ
որդի պ. Յովհաննէս Խաչատրեանից: Ծ. Խ.

տեեալ տարին, առաջ քան թէ մանուկ իշխանը եօթը տարեկան էր եղել. 1815-ի յեղափոխութեան պատճառով ստիպուեցաւ սա թողուլ իր հայրենիքը, բացի իր մօր Հորտենշիպի բաջարտութիւնից ամենեւին ուրիշ օգնական չունենալով:

Ֆրանսիայից աքսորված մանուկը ստիպված էր իր մօր հետ միասին անդադար փոխել իր բնակութեան կամ ապաստանած տեղը. հարկադրվելով հեռանալ Ժենեվից, նոքա գնացին Սափօիա, իսկ այնտեղից փոխվեցան դէպի Կոնստանս: 1817-ին, Հորտենշիա Թագուհին իր և իր մանուկի հալածանքը վերջացած համարելով, Կոնստանսեան լճի ափում Արենենբերգ կալուածը գնեց, ուր կատարելապէս առանձնացած սկսեց իր զաւակների կրթութեանը պարապիլ:

Կատարեալ իրաւունք պէտք է տուած այն ուղղութեան, որով Հորտենշիա Թագուհին ուղում էր կրթել իր զաւակները, դեռ նապոլէօնեան ցեղի շատ փառաւոր ժամանակները ասում էր նա իր մօր Ժօզէֆինէին, որ իրըն մեծ մայր բնքչութեամբ փաղաքշում էր Լուդովիկոս Նապոլէօնին. ընախ և առաջ ես ուղում եմ իմ զաւակներս օրինաւոր մարդ անել. ես չեմ ուղում, որ նոցա մէջ աճեն այն արատները, որ ծնում են մեծութիւնից. դորա հակառակ ես ուղում եմ որ նոքա մտածելով իրեց վսեմ ապագան աւելի և աւելի լաւանան:

Իր մօր և այն ժամանակ երեւելի պրօֆէսսօր Լեբայի տեսչութեան տակ մանուկ Բօնապարտէն մեծ առաջադիմութիւնք էր ցոյց տալիս որպէս յունարէնում և լատիներէնում, այնպէս և նոր լեզուներում: Բայց մանաւանդ յատուկ հակամիտութիւնք ունէր դրական գիտութիւնքը սորվելու նոյնպէս երեւում էր նորա մէջ զինուորական, մանաւանդ թնդանօթաձիգ արուեստի ձգտողութիւն: Սիրելով զինուորական պարապմունքը մտաւ նա զուիցերեան զօրքի մէջ և իր մէքքի վրայ կրելով հասարակ զինուորի պետապահը շատ անգամ կատարում էր լեռնային հոգնեցնող ճանփորդութիւնք:

Երբ 1830-ին յեղափոխութիւնը վառվեցաւ, Լուդովիկոս Նապոլէօնը Տիւնի մերձակայքում, զուիցերեան լանակումն էր. շատ յոյսեր և շատ ուրախութիւնք զարթեցան նորա հոգու և սրտի մէջ. բայց կարճ եղան նոքա: Յայանի է որ 1830-ի յեղափոխութիւնը ելեքտրական կայծի պէս տարածվեցաւ Եւրոպայի շատ տեղերում: Իտալիան ամբողջում էր և երիտասարդ Լուդով. Նապոլէօնը իր եղբօր հետ միասին գն ց օգնել

Հռոմանիու բնակիչներին, որ ապստամբել էին աւստրիական կառավարութեան ընդդէմ: Այս ապստամբութիւնը ինչպէս Հռոմանիու բնակիչների նոյնպէս և երիտասարդ Բօսնապարտի- ների համար շատ տխուր վերջացաւ: աւստրիական զօրքը շատ սաստիկ հետ ածեցին ապստամբներին, այսպատճառով Լ. Նա- պոլէօնը և նորա եղբայրը ստիպվեցան Անկօնա փախչել, ուր կուրծքի տկարութիւնից մեռաւ նորա եղբայրը և ինքը Լ. Նա- պոլէօնը՝ շատ ծանր հիւանդացաւ:

Հորտենշիա Թագուհին լուր ստանալով այս տխուր անց- քերի մասին, շտապեց Անկօնա, իր կենդանի մնացած Լ. Նապոլէօն որդին աւստրիական պօլիցիայի անբուն հետամտու- թիւնից փրկելու համար: Նա կարցաւ անգլիական անցագիր ճարել և յոյսը դնելով Լիւդովիկոս-Փիլիպոս նոր նստած Ֆրանսիոյ Թագաւորի մեծահոգութեան վրայ, առանց ուշադ- րութիւն դարձնելու 1816-ի օրէնսդրութեան վրայ, որ Բօ- նապարտեան ցեղի ընդդէմ յաւիտեան փակում էր Ֆրանսիոյ դուռերը, որոշեց ժամանակաւոր ապաստանի փնտռել այդ աշ- խարհում: Լուդովիկոս-Փիլիպպոսը, ինքը քսոսորի համը առած լինելով, յօժարակամ ընդունեց երբեմնական Թագուհին և հա- մաձայնեցաւ թոյլ տալ Լուդով. Նապոլէօնին մնալ Պարիզի մէջ, մինչև նորա առողջանալը: Լ. Նապոլէօնը իր Պարիզ գտնված ժամանակը մի յարգութեան թուղթ գրեց Թագաւորին, որով խնդրում էր նորանից Ֆրանսիոյ ծառայութեան մէջ մտնելու թոյլտուութիւն, թէև որպէս լոկ զինուոր:

Այս միջոցին չնայելով թէ Հորտենշիայի և թէ նորա որդու դադանի կերպով և սաստիկ ետրհրդապահութեամբ Պարիզի մէջ լինելուն, նոցա այդ քաղաքը գալու լուրը խիստ շուտ տարած- վեցաւ և այդ միջոցներումն էլ մօտենում էր Նապոլէօն ա- ոաջինի մահի տարելիցը: Մայիսի 5-ին մի փոքր շարժողութիւն առաջացաւ Պարիզի մէջ կայսերական ցեղի անունով և 6-ին Հորտենշիան իր որդով ստիպվեցաւ հեռանալ այդ քաղաքից գէպի Լոնդոն, ճանփի վրայ այս ու այն տեղ հանգիստ առնե- լով: Նրբ Լ. Նապոլէօնը կատարելապէս առողջացաւ Լոնդոնում, մեծ ջերմեռանգութեամբ նուիրեց իր անձը անգլիական սահ- մանադրութիւնը սորվելու և մեծ խնամով ձեռք վարկեց ծանօ- թանալ այն պատճառների հետ որ հիմք էին եղել անգլիական ազգի առևտրական կարողութեան: Մէկ քանի ժամանակից յե- տոյ Լ. Նապոլէօնը դուրս եկաւ Լոնդոնից և իր մօր հետ միա-

սին վերադարձաւ Զուիցերիա, առանց Պարիզին մօտենալու, որ Ֆրանսիական կառավարութեան հետ բան չունենայ:

Առանձնական կեանք վարելով Զուիցերիայի մէջ, Լ. Նապոլէօնը մեծ ջերմեռանդութեամբ սկսեց պարապել գրագիտութեան և այդ միջոցով գրեց իր երկու առաջին աշխատութիւնքը մէկը *Reviés politiques, suivies d'un projet de constitution*, որ 1832-ի մայիսին տպւեցաւ, եւ միւսը *Considerations politiques et militaires sur la Suisse*, որ հետեւեալ տարուս տպւեցաւ: Երկու տարի անցնելուց յետոյ հրատարակեց նա իր երրորդ աշխատութիւնը «*Manuel d'Artillerie*» որի վերայ երեք տարի էր աշխատել և որով իր վրայ դարձուց պիտութեան այդ մասին տեղեակ անձանց ուշադրութիւնը:

1836-ին, Լ. Նապոլէօնը, կարծելով թէ Օրլէանեան ցեղը (Լուդ. Փիլիպպոսը) միմիայն դիպուածով կարողացաւ նստել Ֆրանսիոյ աթոռի վրայ և թէ նա արդէն շարժել է ազգի բազմութեան տեսլութիւնը, միմիայն կողմնակից ունենալով իրեն բաղաբացիքը, ձեռք զարկեց այն ամենքին յայտնի Ստրազբուրգեան խռովութեան, որ ինչպէս յայտնի է իշխանի Ամերիկայ արքայութեան վերջացաւ 1840-ին, նա մի նոյն տեսակ փորձ փորձեց Բուլոնում, որ նոյնպէս անաջող զնաց և ինքը նոյն տարուս հոկտեմբ. 6-ին ալնուականաց դատաստանով յաւիտենական արգելանքի դատապարտւեցաւ Ֆրանսիական ամրոցներէի մէկի մէջ: Լսելով իր դատակնիքը Լուդ. Նապոլէօնը հաստատ ձայնով ասաց «գոնէ Ֆրանսիոյ մէջ մեռնելու բաղդը կունենամ»:

Արգելանքի տեղ նշանակուած էր Գամ բերդը:

Բայց Լ. Նապոլէօնը դեռ 1839-ի Յուլիսի մէջ աւարտել էր իր չորրորդ աշխատութիւնը «*Idées Napoleoniennes*» մակագրով: Այս աշխատութիւնը պէտք է գլխաւոր համարել Ֆրանսիոյ կայսեր բոլոր աշխատութեանց մէջ, որովհետեւ նորա մէջ երևում է նորա յատուկ բնաւորութիւնը և որի գաղափարքը կամաց կամաց գործ է դնում յայտնի է թէ չմոռանալով իր ցեղի օգուտը և աւանդութիւնքը, իր տխուր արգելանքի մէջ, Լ. Ն. մեծարութիւն էր գտնում միմիայն գրագիտական պարապմանց մէջ: Գամի մէջ նստելով, 1841-ին գրեց նա *Fragments historiques & Theorie explicative de la pile voltaïque*, որ և ուղարկեց Ֆրանսիական գիտութեանց ձեմաբանը:

1844 Լ. Ն. հրատարակեց երկու ուրիշ նոր աշխատու-

Թիւնք «Réflexions sur le mode de recrutement de l'armée»
և «Extinction du pauperisme»

Հինգ տարի անցել էր արդէն այն օրից երբ Լ. Ն. արգելական բնակիչ եղաւ Գամբերգի. նորա հայրը երբեմնական Հոլլանդիոյ Թագաւորը մեռնելու վրայ էր. Լ. Ն. Թոյլտուութիւն խնդրեց, որ երթայ իր հօր տեսութեան խոստանալով և իր պատիւը երաշխաւոր բռնելով, թէ այդ տեսութիւնից յետոյ էլ կը վերադառնայ իր արգելանքի տեղը. Բայց Ֆրանսիոյ կառավարութիւնը առաջարկելով նորան խնդրված Թոյլտուութիւնը այնպիսի պայմաններ մէջ բերեց, որ արգելականը անպատուութիւն համարելով իրեն այդ պայմանքը մնաց Գամբի մէջ:

Այս բոլոր դէպքերից ստիպված Լ. Ն. 1846 փետրվ. 2-ին մի նամակ գրեց Օգիլոն-Բարրօին որ Ֆրանսիական կառավարութեան առջև միջնորդութիւնք էր անում արգելականի մասին: Այդ նամակի մէջ մանաւանդ ուշադրութեան արժանի են հետեալ մի քանի տողերը:

«Արդէն շուտով վեց տարի կը լինի, գրում էր Լ. Ն. Օգիլոն-Բարրօին,—որ ես առանց դժգոհութեան տանում եմ «արգելանքը, որ համարում եմ բնական հետեանք իմ կառավարութեան ընդդէմ, ներգործութեանց, Եթէ հարկաւոր լինի «ես էլ տասը տարի կը տանեմ առանց մեղք դնելու բաղդի «կամ մարդոց վրայ: Ես տանջվում եմ, բայց ամեն օր ինքս «ինձ ասում եմ—ես Ֆրանսիոյ մէջ եմ, ես իմ պատիւս անարատ պահել եմ. ես ուրախութիւն չունիմ, բայց և ոչ սիրտ կտրուող վշտեր, և ամեն իրեկուն հանգիստ եմ բնում: Ոչ մի բան «չէր. կարող ամբօրեւ իմ խղճի խաղաղութիւնը կամ կեանքիս «խաղաղութիւնը, եթէ հայրս իր կեանքի վերջում ինձ իր մօտ «տեսնել չկամենար»:

Բայց չնայելով, որ խոստանում էր արգելանքը կրել էլ տասը տարի, Լ. Նապոլէօնը 1846 մայիսի 26-ին բանտորի հագուստներով կերպարանափոխ եղած փախաւ իր արգելանքի տեղից դէպի Անգլիա, ուր վեստին սկսեց քաղաքական և տընտեսական գիտութիւններով պարապել:

Փետրվարեան յեղափոխութեան ժամանակ Լոնդոնում էր նա. բայց նորանից երկու օր ետքը երբ Օրլէանեան գեղք ջրկվել էր աթոռից Լ. Նապոլէօնը մտաւ Փարիզ:

Այստեղ սկսվեցաւ նորա քաղաքական ասպարէզը. առաջ որպէս ազգային երեսփոխան (մեծ դժուարութեամբ ազգային ժողովարանի մէջ ընդունված) ետքը որպէս նախագահ Ֆրանսիական կառավարութեան չորս տարով, աւելի ետքը վերստին ընտրվելով տասը տարով. Բայց այդ տարիքը չպիտի անցնէին. Լ. Նապոլէօնը դարձաւ կայսր. և միագլխեան արծիւը և Նապոլէօն առաջնեորդի մեղուները բռնեցին թէ հասարակապետութեան, թէ Բուրբօնեան շուշաններէ և թէ Օրլէանեան դրօշի տեղը. Դեկտեմբերեան հարուածը կատարեց մնացածը.

ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ